հետ բարեկամաբար կը վարուէր. բայց նորա այս վարմունքն նոցա վատթարեցրեց եւ գրգռեց Մամունից նշանակած նորա փոխանորդների դէմ։

Ալմուտասիմ Բիլլահի (833—842) դրեց Հասան Ի. Ալի Բադաղխին, որ յայտնի էր Մա-մունի քէր-ն անուամբ, այստեղ կառավարիչ. նա անփոյթ գտնուեցաւ երկրի եւ նորա իշխանների վերաբերմամբ, որոց հետ նա մեղմ կը վարուէր, մինչեւ որ զօրացաւ նոցա ամբարշտութիւնն դէպի սուլթանն եւ չարութիւնն կառավարիչների դէմ։

Իսահակ Ի. Իսմայէլ Ի. Շուայբ, բանի Ումայա'ի արձակուած ստրուկը, նուաճեց Վիրք։ Իշխան Սահլ Ի. Սմբատ յարձակեցաւ Հայդար Ի. Կաուս Օփշինի՝ Հայաստանի կառավարչի՝ վերայ եւ սպաննեց նորա քարտուղարին, որ փչեց հոգին։ Ապա այստեղ կառավարեցին ոստիկաններ, որոնք կ'ընդունէին երկրի բնակիչներից նոցա աւելորդ ինչքը եւ կը բաւականանային նոցա գլխահարկի մասնով յարմար դէպքում։

Հաւատացելոց ամիրապետ Ալմուտավակկիլ ալա-Ալլահ (847—861) իւր խալիֆութեան երկրորդ տարին կարգեց Հայաստանի վերայ Իւսուֆ Ի. Մահմեդ Ի. Իւսուֆ Ալմարվազ'ին, որ՝ գալով Խլաթ՝ ձերբակալեց տեղի իշխան Բագրատ Ի. Աշոտին եւ տարաւ նորան Սամառայ. այն ժամանակ թափուր մնաց երկիրը իւր իշխաններից, ազատանիներից եւ մեծամեծներից։

Իսկ Իւսուֆի օգնականն՝ Ալայ Ի. Ահմադ՝ դիմեց Սիսականի վանքն, որ յայտնի է Բաժակայ վանք անուամբ եւ որ Հայաստանի բնակիչներից միշտ պատուած է եւ ուխտատեղի ծառայած։ Ալայ յափշտակեց նորա բոլոր ինչքը եւ սկսեց նեղել իշխաններին. սոքա՝ տեսնելով իրանց անտանելի եւ սոսկալի դրութիւնն՝ սկսեցին գրաւոր կերպով հաղորդակցել միմեանց հետ, մէկը միւսին գրգռելով անհնազանդութեան եւ ապստամբութեան։